# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

**ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-19/4 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգով գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի**

**Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 19.02.19թ. ժամը 11:00-ին էլեկտրոնային գնումների e-auction կայքի միջոցով:**

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Աշոտ Սիմոնյան

Հանձնաժողովի անդամներ՝ Աշոտ Քթոյան

Էրիկ Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Սևակ Պետրոսյան

## Հայտերի բացման և գնահատման մասին

**1. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

1.1 ՀՀ արդարադատության նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները |
|---|---|
| 1 | <ՊԱՏՐՈՆ ՌՄ> ՍՊԸ |
| 2 | <Պռոֆիլայն Էռ Էմ> ՍՊԸ |
| 3 | <Նորմա-պլյուս> ՍՊԸ |

**2. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

**3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

4.1 Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

**5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

5.1 Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

| Չափաբաժին | Նախահաշվային գինը, ՀՀ դրամ | Առաջարկված գները, ՀՀ դրամ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | <ՊԱՏՐՈՆ ՌՄ> ՍՊԸ | | <Պռոֆիլայն Էռ Էմ> ՍՊԸ | | <Նորմա-պլյուս> ՍՊԸ | |
| | | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ |
| 1 | **525000** | 437500 | 525000 | 435000 | 522000 | 437500 | 525000 |
| 2 | **1404000** | 1170000 | 1404000 | - | - | - | - |

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

**6. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**

6.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ **1**-ին չափաբաժնի համար առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **<Պռոֆիլայն Էռ Էմ> ՍՊԸ**-ին, **2-րդ** չափաբաժնի համար առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **<ՊԱՏՐՈՆ ՌՄ> ՍՊԸ**-ին:

**7. ՊԵԿ հարցման և մասնակցին ծանուցման վերաբերյալ**

7.1 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ հրավերով սահմանված կարգով կատարել ՊԵԿ հարցում և ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ հրավերով սահմանված փաստաթղթերը ներկայացնելու համար:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

**8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.**

8.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից համապատասխան եզրակացությունը ստանալուց և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով սահմանված փաստաթղթերը ստանալուց հետո՝ հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, ժամը 10:00-ին, ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8, 306 սենյակ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

**Գնահատող հանձնաժողով՝**

Ա.Սիմոնյան /նախագահ/

Ա. Քթոյան

Է. Համբարձումյան

Ս. Պետրոսյան /քարտուղար/